

յայտնած գաղափարներէն սմանք վիճելի բլլան) Տիրոջը այգիին մէջ տիրոջսով իր շարքը, յորինած էր քանի մը թատրերգութիւններ, Ամերիկահայ հարմարուն, Սխարը շիշ կամ Մարտի փեսան, սրտնք յաճախ ներկայացուած են Ամերիկահայ գաղութին մէջ եւ այլուր: Ասոնցմէ գատան հրատարակած է Պատկերազարդ Հայոց Պատմութիւն մը, երկու հատորով, Գրելու Արուեստը, Գրագիտութիւն (երեք պրակով), գաղութներու նոր սերունդին համար ժողովրդին զիւրամատչելի ոճով մը գրուած՝ ազգային պատմութիւնն ու

մշակոյթը երիտասարդ գաղութահայութեան սիրելի գործընելու համար: Ան կ'աշխատակցէր նաև ամերիկեան թերթերու, մասնաւորապէս Պոսթընի Գրիսչըն Սայրնս Մոնիթորին, հայ գրականութեան մասին յոգուածներ տալով եւ թարգմանութիւններ Ահարոնեանի, Կ. Չարեանի եւ այլ հայ հեղինակներու բնաթիւ հէջերու: Արժէքաւոր եւ բեղուն ուժ մըն է որ կը պակասի մենէ այդ վաղաժամ մահով:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

## ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐՀ. ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հանոյ՜ով կ'արտասպեմ գլխաւոր հասուածները յօգուածի մը գոր Պ. Սուրխաբեան, Խ. Հայասանի քանակականի սօնակահարութեանց ներկայ գտնուելէ յետոյ, հրատարակած է «Խորհրդային Հայասան» թերթին մէջ:

... Տասնամեակի տօնակատարութիւնը հասարակ տօն չէր, այլ սեղի զուտ ցուցադրումն, թէպէտ նեղ սահմաններում, այն հսկայական կազմակերպչական եւ շինարարական աշխատանքի որ տարել է այնտեղ Խորհրդային իշխանութիւնը... Երեւանի եւ առհասարակ Հայաստանի տեղեկը իմացողի համար նրա այսօրուան շինարարութիւնը գործել է հաճախուէր: ... Բանտարական մեծ աները, պետական եւ կուլտուրական նորակառույց չիմնարկները շարքերը խորհրդային մեծ քաղաքի տալագան կանխորոշում են իր փայլուն հեռանկարով: ... Այս անգամ մենք ղիտեցինք անտանարտական ինտիմատուի հսկայ շէնքը, որը մի կողմից աւարուում է, միւս կողմից արդէն պարագմունքները դնում են: Հսկայական կորպուսի ծարտարպետութիւնը կուս եւ հաստատուն նստուածք է հաղորդել շէնքին: Ներքին սարքաւորումը (ապարատները, գործիքները, յատուկ բաժանմունքները), վերտեստը Պոսթետոր Մոսկոնոյի ստելով, առաջնակարգ է ամբողջ Խորհ-

Միութեան ծասշտարով: Պոսթետորը երեւան գալուց առաջ եղել է Կազանի անտանարտական ինտիմատուում, որը համարում է առաջինը Միութեան մէջ: Երեւանի ինտիմատու, որպէս նոր կառուցուող, պէտք է ունենայ բոլոր առաւելութիւնները հների հանդէպ: Ինտիմատու ուսանողները եւ պոսթետորները համար ունի հանրակայարան: Առաջին շրջանաւարտները գուրս են գալու առաջիկայ տարուանից, որոնք ցրուելու են ամբողջ Անգրլովկասում:

Մենք ներկայ եզանք Ֆիլիքո-տերապէվոսիկ ինտիմատուի, նոյնպէս նորակառույց, բացման հանդէսին, որ տեղի ունեցաւ տասնամեակի օրը: Ֆիլիքական մեթոտով բժշկելու բոլոր գործիքները ներկայացնում են գիտութեան վերջին խօսքը: Ինտիմատուի նպատակն է ոչ ծիայն պրակտիկ աշխատանքը Հայաստանի աշխատանքութեան, առաջին հերթին գործարանային եւ հանքային բանտութեան, առողջական վիճակը բարձրացնել, այլ եւ թէրբետիկ աշխատանքը, այսինքն գիտական-հետազոտական ուսումնասիրութիւնը. ինտիմատու ունենալու է բաժանմունքներ Լեկինականում եւ Ալլազ-վերտում (բանտարական կենտրոններում):

Տասնամեակի նախորդ օրը տեղի ունեցաւ Պետական Թատրոնի չիմնարկէքը, մի շէնք, որն իր

ճարտարապետութեամբ եւ բեմական բոլոր յարմարութիւններով քաղաքի զարգելից մէկն է լինելու: Այստեղ պէտք է ասել, որ քաղաքի արտոյ մեծանալուն, բանուարական կազմակերպութեան անձնական համապատասխան ոչ մի շէնք չկայ մեծ ժողովների համար: Այսօր Երեւանի համար անհրաժեշտութիւն է 1000—1500 հոգու համար ժողովարանը. թէպէտ դաշլիճներ եւ թատրոնական բեմեր կան, սակայն դրանցից ոչ մէկն ալ ես չե գոհացնուծ:

Կանձիւնալ անտեսութեան ճատին խօսելիս, շէշտելով նրա խոշոր կառուցողական աշխատանքը, չի կարելի մատնացոյց չանել նրա մի մեծ բացը, զա փոքրների անկանոն վիճակն է, սալաշատակման յետաձգումն է: Կոնսրուտը, հակապութիւնը նորակառուց աների եւ ցեխտա (լակ չոր ժամանակ փոշոտ) փոքրների միջեւ՝ աչք խփոյ: Այս նկատարութիւնը մենք անուծ ենք ինքնաքննադատութեան կարգով: Անշուշտ կայ մի արդարացուցիչ հանգամանք, մինչեւ կանալիզացիա անցկացնելը ձեռնառչէ փոքրները քարել: Բայց չէ՞ որ դա կարող է ուշանալ, կամ հարկուոր է շտապ կարգով անցկացնել կանալիզացիայի հարցը: Երակառուց Երեւանը շատ բան է կորցնուծ իր փոքրների նման պատկերի պատճառով: Փաստն ալս է:

Մեզ վրայ, եւ առհասարակ դրսից եկած պատգամաւորութիւնների վրայ, մեծ ապաւորութիւն դործեց տաննամեակի աութիւ բացուած ցուցահանդէսը: Այստեղ ներկայացուած է Երկրի արդիւնաբերութեան, դիւղատնտեսութեան եւ կուլտուրացի շինարարութիւնը: Յուցահանդէսը՝ պայքարի եւ յամառ աշխատանքի պայմաններում տարուած մեծ նուաճումների համագումարն է: Տեկտսիլը, հանքերը, շինարարական նիւթերը (Երախի աութիւ, պեմզան, մարմարը, եւլն.), գործարանների արտադրանքները, դիւղատնտեսական մասն իր բոլոր ճիւղերով — բամպակը, հացահատիկը, բնախի մրգեղէնը, ծխախտը, կանտեմիները, կոնեակը, դիւնիները, բանջարաբուծութիւնը, կաթնատնտեսութիւնը, ալս բոլորն իրենց օրինակելի նմուշներով ցուցադրուած են ալստեղ: Մեր անասն ալնտեղ շատ բազմակողմանի էր, սակայն ամէն բան յիշել չենք կարողանուծ: Աչքի բնկնուծ էր իր սրակով էկապորտային շիւքցարական պանիրը: Գեղեցիկ է եւ հարուստ՝ անալնագործական բաժինը: Ալստեղ ամէն բան կայ. ալսինքն՝ ամէն արհեստի արտադրութիւն: Ընտանձնապէս աչքի են բնկնուծ գոր-

ծուածքները, որոնց լուադոյն վարպետները Եոր-Արաբկիրցիներն են: Գործուածքների նրբութիւնը երբեմն սալշեցուցիչ է: Յուցահանդէսի ալս բաժինները շատ աչքի բնկնող են իրենց բազմակողմանիութեամբ, մենք թուալիկ ենք հաղորդուծ:

Յուցահանդէսի կուլտուրական բաժնուծ խոշոր տեղ ունի կերպարուեստն իր ճիւղերով, եւ ամենից առաջ նկարչութիւնը, պետական հրատարակչութիւնը եւ սոցիալական դատարակչութեան մաեկական բաժինը: Եթէ չենք սխալուած, ցուցադրուած բազմութիւ նկարները, նաեւ քանդակները, գերադանցօրէն ժամանակակից են լրենյ թեմատիկայով: Գա փայլուն ապացոյց է ալն բանի, որ կուլտուրական յեղափոխութիւնը գորեղապէս ազդել է արուեստագէտների ստեղծագործական փանապիայի վրայ: Բոլորը, դրեթէ բոլորը անդրադարձնուած են Խորհրդային սոցիալիստական շինարարութեան սուանձին մոճէնտները, աշխատաւորական եւ մասամբ յեղափոխական պայքարի հերոսական շրջանը: Ի հարկէ, բնագրուած թեմաներն առ ալս թագմակողմանի չեն, սակայն նկարիչների պրիմները տարբեր են, շարուն չկայ: Մեծ տեղ են բուուած սկանակները, սրոնց մէջ կան յուսողրիչ գործեր, առեալներ յեղափոխական եւ պրակտարական նկարիչների սալոգայ կարերի նկատմամբ:

Աչքի բնկնող տեղ է բուուած ցուցահանդէսուծ պետական հրատարակչութիւնը: Ալստեղ նուաճուծը մեծ է, — մեծ է քանակով, որակով, սալոգրական տեխնիկայով եւ դրքի գեղարուեստական ձեւաւորումով: Յուցանիշները ցալստուն են սուալին եւ երկրորդ հնգամեակներէ. 19-21-25 թուերին տարուել է 244 անոււ, 1926-30 թուին 1282 անոււ. մամուլ՝ առալին հնգամեակում 1739, Երկրորդում 6633. բնգհանուր ալրաժ՝ առալին հնգամեակում 1,028,900, երկրորդում 6,125,595. ուէալիզացիա (ոււրլով) առալին հնգամեակում 451,693, Երկրորդում 3,060,950: Ամենաբարձր չափերը վերաբերում են 1930 թուին, տարուել է 410 անոււ դիրք, 1,720 մամուլ, 2,054,000 տիրաժով եւ 9,979,000 օտիւքով:

Ամենամեծ նուաճուծը Պետհրատի՝ սալոգրական տեխնիկայի տեսակէտից; դա Լենինի առալին մեծամաւալ հատորն է, որը Երրոպական լուադոյն հրատարակչութեան հետ կարող է մրցել: Գա Հալստանի հրատարակչական գործի յալթանակն է անկապում: Պետհրատը, վերջերս միայն, խոշոր

քայլ է ունիլ զրքի գեղարուեստական ձեւաորձան բնագաւառում: Այս տեսակէտից աչքի են բնկնում պրոլետարական եւ ուղեկից գրողների վերջերս հրատարակուած գործերը:

Յուցահանդէսը հետաքրքրութեան արժանի բազմաթիւ նմուշներ ունէր, բայց այդ ամենի ծափն պէտք է գրուի առանձին առանձին, որն անշուշտ կ'իրագործէ ծասնագէտը:

Մենք այստեղ պիտի յիշենք որ արուեստի ծիւս բնագաւառների (երաժշտութիւն եւ պար) ցուցադրումը եւս անդի ունեցաւ հանդիսաւոր նիստի երեկոյին Կուլտուրական Ցան գահչիւճում: Պետական Կոնսերվատորիան խոշոր նուաճում ունի, յանձին սիմֆոնիկ օրքեստրի, իր ճշակած, յղուած անամբըլով: Մեղ վիճակուեց լսել Սպեղիարեանի գործերը, որոնք կատարուեցին նուրբ վարպետութեամբ: Գասպրոցայ է, որ երաժշտական կուլտուրան հիմնաւոր արձառ է բունել: Լսեցինք արեւելեան երաժիշտների խումբը: Առանձնապէս աջող կատարեցին խումբը եւ Կոնսերվատորիայի երկու երգչուհի ուսանողուհիներ՝ Տէր Գեւորգեանի «Երան»ը Բումբը նուաճումներ ունի, բայց մեղ թուած է որ նա դեւջի գոնի իր զարգացման տեսական ու տեխնիկական (գործիքների ներդաշնակութեան տեսակէտից) զլլտաւոր հիմնակէտը: Ըստ երեւոյթի՛ն՝ այն գոնելու համար հարկաւոր են երաժշտական լուսագոյն ուժերի հաւաքական փորձերը: Պէտք է պարզուի, արեւելեան երաժշտական գործերը նուրբ ներդաշնակութեամբ եւ հարազատ արտայայտութեամբ նուագելու համար անհրաժեշտ է արեւելեան յատուկ օրքեստր, թէ սիմֆոնիկ օրքեստրն իր գործիքային լայն տիրապահումով բնդուեակ է արտայայտելու ամէն արեւելեան երաժշտական զրուածքները: Կամ ի՛նչ է հարկաւոր արեւելեան օրքեստրին իր նեղ շրջանակից հանելու համար: Մասնագէտները (յատկապէս արեւելեան երաժշտութեանը լաւ ծանօթ) գործն է գործնականապէս լուծել այդ հարցը:

Կուլտուրական ճշակման ենթարկուած է Կոնսերվատորիայի երգեցիկ խումբը: Շատ աջող էր ժողովրդական երգերի կատարումը: Թոյլ են ձիւայն բամբ ձայները. դա, լատ երեւոյթին, բոլոր հայ խմբերի պահաաւոր կողմն է: Կոնսերվատորիայի խումբը պէտք է սպաս լինի այդ պակասութիւնից: Նայն երեկոյեան մեղ վիճակուեց առաջին անգամ տեսնել տաճկահայ ժողովրդական խմբական պարերը

(Սասունցիների, Մշեցիների եւ այլն): Տղաւորիչ են իրենց օրիգինալութեամբ, արեւելեան վառ գունեղութեամբ: Ոչ մի գունհկութիւն: Այս բնագաւառում եւս կուլտուրականութիւնն ակներեւ է: Լաւ էր պարայտումը իր պարով եւ ձօղայիկ ժողովրդական զգեստներով, իսկ պարապարկը լաւ էր առանձնապէս:

ՍՍՍՐԻԹԵԸՆ

### ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՈՐԾԸ

Կոմիտաս Վարդապետի անսխալ գործերու հինգերորդ տետրին առթիւ զոր Փարիզի Կոմիտասեան Խնամատար Յանձնաժողովը հրատարակած էր քանի մը ամիս առաջ, ֆրանսացի յայտնի երաժիշտ Ռքնէ Լքնօրման «Լք Մօնա Միւզիքայ» ամսաթերթի գեկտեմբերի թիւին մէջ հրատարակած է ընդարձակ յօդուած մը խորին համակրութեամբ լի դէպ ի հայ երաժշտութիւնը և դէպ ի Կոմիտասի անձն ու գործը: Եյդ յօդուածի մէջ, Կոմիտասի կենսագրութիւնը ուրուագծելէ եւ անոր կատարած գործին կարեւորութիւնը մասնանշելէ յետոյ, կը յիշատակէ անսխալ գործերու հինգ հաւաքածուներու լուսագոյն էջերը, անոնց եղանակներու ինքնատիպ շնորհը եւ հարազատ ու ճարտար դաշնակուծը կը գրուատէ: «Մարդ ցաւով կը կը զատուի այս տետրերէն՝ առանց յիշատակած ըլլալու անոնց մէջ գոնուող բոլոր երգերը որ արժանի են յիշատակուելու, կ'ըսէ Լքնօրման իր յօդուածը վերջացնելով, եւ պէտք է ջերմօրէն շնորհաւորել Կոմիտասեան Խնամատար Յանձնաժողովը այդ գործերը ճուայցումէ փրկած ըլլալուն համար:»

Երեւանի մէջ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 60ամեակը տօնուած է գեղեցիկ հանդէսով մը որ անդի ունեցած է «Կուլտուրայի Ցան» գահչիւճին մէջ: Բացման խօսքն ըսած է կրթական գործաւարը որ հանդէսին կը նախագահէր: Յետոյ խօսք աւած են զանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ Կոմիտասի ծախրիմ բարեկամներ եւ երաժիշտներ որոնց սմանք աշակերտած են վարպետին: Մէջ ընդ մէջ երգուած են անոր գաշնակած